ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ա.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՇ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն Մկրտիչ աւագ քահանայի Դաւրիժու, որով արտօնեցաւ Զաւահիր Յակովբեանի որդւոյ պսակը օր. Նունիայի հետ ազգակցութեան 6-րդ աստիճանում։ Թ. 448.

— Գրութիւն յանուն Անուոյ վանահայր տ. Միքայէլ վարդապետի, որով պատուիրեցաւ Հռոմոսի և այլ վանքերի հնութիւնները պահպանելու համար ընտրել շրջակայ ժողովրդից վեց հոգաբարձու և առաջարկել ի հաստատութիւն։ Թ. 455։

— Յանուն ս. Սինոդի, որով պատուիրեցաւ անվանահայր վանքերի վերայ կարգել վանահայրեր Էջմիածնի անպաշտօն վարդապետներից։ Թ. 456.

— Յանուն Գանձակի փոխանորդ տ. Կորիւն վարդապետի, որով արտօնեցաւ ընդունել հայ եկեղեցու գիրկը երեք գերուհի մահմեդականներին։ Թ. 461.

— Յանուն հոգ. Կառ. Կարուց, որով անտօնուեցաւ տաճկահպատակ Անդրանիկ Ապաճեանցին մտնել նոր ամուսնութիւն։ Թ. 462.

— Յանուն Ն. Նախիջևանի Նիովիթա գիւղի ժողովրդեան, որով շնորհուեցաւ ս. Յովհաննու Կարապետի նշխարներից մի մասն նոյն գիւղի եկեղեցում զետեղելու համար։

— Ցանուն Երևանի փոխ-թեմական Գեր. Յուսիկ եպիսկոպոսի, որով պատուիրեցաւ վիճակային արդիւնքներից կենսաթոշակ տալ բաղմամեայ ուսուցիչ Մկրտիչ Պալեանին սկսեալ անցեալ սեպտ. 15-ից։ Թ. 507.

— Պատուիրեցաւ Երևանի վիճ. Կոնսիստորիային նրա խնդրանաց համաձայն Դարաչիչագի մոմավաճառութեան արդիւնքը յատկացնել թեմական դպրանոցին։ Թ. 509.

— Ցանուն Տփխիսի առաջնորդ Գեր. Տ. Գարեգին արքեպիսկոպոսի, որով պատուիրեցաւ ս. Գայիանեան օր. ուսումնարանի դրամագլուխը՝ համարելով անձեռնմխելի, տալ ի պահեստ Կոնսիստ. գանձարանի, իսկ տոկոսիքը, մինչև ուսումնարանի բացումը ուղարկել ճեմարանի վարչութեան՝ որբ աշակերտաց պահպանութեան համար. իսկ ուսումնարանի բացումից յետոյ յանձնել վարչութեանը յոգուտ ձրիավարժ սաների, ի յիշատակ բարերարների։

— Ցանուն Սինոդի, որով պատուիրեցաւ տալ տ. Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանին ի նպաստ հանքային բուժավայրերը գնալու համար 300 ր.

— Ցանուն նոյն Սինոդի, որով պատուիրեցաւ տալ ուսանող Սահակ սարկ. Տէր Ղազարեանին իր միաբանական ռոճիկը 240 ր. մինչև 1908 թ. յունվար ամիսը։ Թ. 524.

— Ցանուն Տ. Մաղաքիա պատրիարքի Թուրքիոյ, որով յանձնարարուեցաւ Երուսաղէմ ուխտ գնացող Գեր. Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեանին ցոյց տալ խնամք և աջակցութիւն Պոլիս մտած ժամանակ։ Թ. 545.

— Ցանուն Երուսաղէմի պատրիարքի ի նոյն միտս։ Թ. 546.

— Ցանուն տպարանի տեսուչ տ. Մխիթար վարդապետի, որով կարգեցաւ անդամ տպարանի տ. տ. Իսահակ վարդ. և Երեմիա աբեղան իր նախագահութեամբ։ Թ. 550.

— Ցանուն Սինոդի, որով ուղարկուեցաւ թ. 549

կոնդակի պատճէնը հոգևոր պաշտօնեաների ընտրութեան վերաբերմամբ։ Թ. 554.

— Ցանուն Կոնսիստ. Երևանի, որով ուղարկուեցան Խալֆալու գիւղի մի քանի օրթոդոքս ժողովրդի խնդիրները հայոց եկեղեցու գիրկը վերադառնալու մասին։ Թ. 572.

— Ցանուն պ. Աղէքսանդր Մանթաշեանի, որով հրաւիրուեցաւ ի կատար ածելու Մ. Տաճարի վերանորոգութիւնը։—

— Ցանուն Սինոդի, որով յայտնուեցաւ տ. Մատթէոս վարդ. Սինոդի անդամութիւնից արձակուելը։—

— Ցանուն առաջնորդին Տփխիսի, որով պատուիրեցաւ թողնել առանց հետևանքի Սինոդի կազմած ծառայողների ռոճկի շտատը և հրահանգուել ըստ առաջնոյն մինչև նոր տնօրէնութիւն։ Թ. 661.

— Ցանուն առաջ. Բեսարաբիոյ ի նոյն միտս։ Թ. 662.

— Ցանուն առաջ. Աստրախանի ի նոյն միտս։ Թ. 663.

— Ցանուն առաջ. Շամախոյ ի նոյն միտս։ Թ. 664։

— Ցանուն առաջ. Ղարաբաղի ի նոյն միտս։ Թ. 665.

— Ցանուն առաջ. Երևանի ի նոյն միտս։ Թ. 666.

— Ցանուն Սինոդի, որով պատուիրեցաւ ազատ համարել տ. Եղնիկ վարդապետ Դեանչէցեանին հոգևոր կոչումից նրա խնդրանաց համաձայն։ Թ. 670.

— Ցանուն նոյն Սինոդի, որով պատուիրեցաւ եռամսեայ արձակուրդ տալ անդամ տ. Յուսիկ վարդապետին։ Թ. 675։

— Ցանուն առաջ. Բեսարաբիոյ, որով կարգուեցաւ տ. Եղիշէ Ծ. վարդապետ Մուրադեանը ժողովրդեան և իր ցանկութեան համաձայն վանահայր Ղրիմի ս. Խաչ վանքի։ Թ. 778.

— Ցանուն տ. Եղիշէ Ծ. վարդապետի Մուրադեան, որով պատուիրեցաւ փութալ իր պաշտօնատեղին՝ ս. Խաչ վանքը։ Թ. 479.

Բ.

Հայրապետական գոհունակութիւնք եւ օրհնութիւնք.

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան յանուն նախագահի և անդամոց Ֆիլիպպէ քաղաքի հանգանակիչ յանձնաժողովի Կովկասի արկածելոց օգտին հանգանակած 1000 ֆրանկի համար։ Թ. 482.

— Գոհունակութեան և օրհնութեան յանուն Ամերիկայի Թրօ քաղաքի դերասանական խմբի նոյն նպատակի համար նուիրած 12 անգլիական ոսկու համար։ Թ. 483.

— Օրհնութեան յանուն Վասիլիյ Նիկոլաեվիչ Շուստովի նրա դպրոցական գործին նուիրաբերած 200 ռուբլու համար։ Թ. 492.

— Գոհունակութեան և օրհնութեան յանուն Շուշուայ թեմ. դպրանոցի Հոգաբարձութեան, որով ազատ համարուեցան դպրանոցի հոգաբարձութիւնից։ Թ. 493.

— Օրհնութեան յանուն նորընտիր Հոգաբարձութեան նոյն դպրանոցի տ. Եղիշէ քահանայ Թարխանեան և պ. պ. Քրիստափորի Բահաթրեան, Գերասիմի Շահնազարեան, Ա. Աթաբէկեանց Ջ. Բալայեանց. Լ. Աթաբէկեանց, Ց. Իշխանեանց, Անդ. Նարինեանց, Ա. Ջանամեանց, Ց. Մելիքեանց, Բ. Տէր Սահակեանց և Դ-բէկ Շահնազարեանց, որով հաստատուեցան նոքա իրենց պաշտօնի մէջ։ Թ. 494։

— Օրհնութեան յանուն Միրաքեան Աղէքսանդր և եղբայրների ի յիշատակ իրենց մօր Աննա-Քալիայի ս. Էջմիածնին նուիրաբերած մի հարիւր ռուբլու։ Թ. 518.

— Ցանուն հայ գաղութի Ուէքկէն քաղաքի Ամերիկայի յօգուտ Կովկասի վտանգելոց նուիրաբերած 100 դոլարի համար։ Թ. 648.

Գ.

Հայրապետական պարգևք.

Կոնդակ Յանուն տ. Գրիգոր եպիսկոպոսի Գառնակերեան, որով շնորհուեցաւ Արքեպիսկոպոսութեան տիտղոս։ Թ. 581.

— Յանուն տ. Տաճատ վարդապետի Մելքոնեան, որով շնորհուեցաւ ականակուռ. լանջախաչ։ Թ. 690.

— Յանուն Գէորգ վարդապետի Ռշտունեոյ ի նոյն միտս։ Թ. 691.

— Յանուն տ. Սահակ վարդապետի Աստուածատրեան ի նոյն միտս։ Թ. 692.

**

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մայիսի 5-ին Սինոդը լուծեց Վաղարշապատի բնակիչ Մկրտիչ Ասլանեանի և Վարդիթեր Հայրապետեանի ամուսնութիւնը և իրաւունք տուաւ Մկրտչին նորից ամուսնանալու, Երևանի բնակիչ Գէորգ Մանուկեանի և Սոֆիա Վարդանեան Սաֆարեանի ամուսնութիւնը և իրաւունք տուաւ Սոֆիային կրկին ամուսնանալու։

Մայիսի 10-ին Սինոդը որոշեց տալ կապալաւ Դեստարգել կոչուած հողաբաժինը Առինջ գիւղի բնակիչներին և հրամայեց Երևանի Կոնսիստորիային օրինական համաձայնագրով վստահանալուց յետոյ պայման կապել գիւղի լիազօրների հետ։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Երևանի վիճ. Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Մատթէոս Սայեադեան Անդրէասեանին և ձեռնադրել քահանայ Դաւալու գիւղի վրայ, Նոր Բայազիդի գաւառի Բաբաքիշի գիւղի բնակիչ Սարիբէկ Քոչարեանցին՝ նոյն գիւղի